



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Բնապահպանությունը - որպես -
մարդկության - գլխավոր - հիմնախնդիր , կրթությունը և
դաստիարակությունը դպրոցում»

Առարկան՝ «Կենսաբանություն»

Հետազոտող ուսուցիչ՝ Գոհար Աբրահամյան

Ուսումնական հաստատություն՝ №84 հիմնական դպրոց

Բովանդակություն

| | |
|--|----|
| Չեռագրության աշխատանք..... | 3 |
| Ներածություն..... | 4 |
| Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում..... | 6 |
| Ինչի՞ մասին են ուզում սովորել..... | 7 |
| Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը..... | 9 |
| Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին..... | 9 |
| Եզրակացություն..... | 15 |
| Օգտագործված գրականության ցանկ..... | 16 |

Յետազոտական աշխատանք

Թեմա- Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդիր, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- ինչ է իրենից ներկայացնում բնապահպանական կրթությունը և որքանո՞վ է այն կարևոր:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Ուսումնասիրությունների ընթացքում պարզվել է, որ Էկոլոգիական դաստիարակության մակարդակը գտնվում է ոչ համահունչ մեր դարաշրջանի պահանջներին: Կրթական համակարգի ոլորտի բոլոր աշխատողները պետք է իրագործեն այնպիսի ռազմավարություն, որը կնպաստի աճող սերնդի մոտ Էկոլոգիական կուլտուրայի, Էկոլոգիական գիտակցության ձևավորմանը: Էկոլոգիական գիտակցության արմատավորումը, հիմնավորումը մեր ժամանակաշրջանի ամենահրատապ հարցերից մեկն է, կյանքի գոյության և հարատևման պայմանը: Դրան պետք է հասնել ամեն գնով՝ օգտագործելով մեր հասարակարգի տարբեր օղակներ, տեղեկատվության տարբեր մեթոդներ, հնարներ, միջոցներ:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- «Էկոլոգիական գիտակցություն» տերմինն ավանդաբար նշանակում է «մարդ-բնություն» համակարգում, բնության ներսում փոխադարձ կապերի բարելավում, բնության նկատմամբ գոյություն ունեցող վերաբերմունքի բարելավում, ինչպես նաև տեխնոլոգիայի և ռազմավարության գիտակցական մոտեցում, վերը նշված բոլոր պատկերացումների ամբողջություն: «Էկոլոգիական գիտակցության» ձևավորումը հիմնականում իրականացվում է աճող սերնդի կրթադաստիարակչական աշխատանքում, ըստ կրթական համակարգի տարբեր օղակների: Էկոլոգիական գիտելիքների ձևավորման չափանիշներն են կենդանական, բուսական և անկենդան աշխարհի մասին տեղեկությունները:

Խաչվող հասկացությունները՝

- Էկոլոգիա
- կրթություն
- բնապահպանական դաստիարակություն

Յետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

1. Կենսաբանություն
2. Բնագիտություն

Ներածություն

Չետագոտության կարևորությունը: Այսօր, առավել քան երբևէ, աշխարհում սրվել են գլոբալ, տարածաշրջանային և տեղեկատվական բնապահպանական հիմնախնդիրները, որոնք վտանգ են ներկայացնում բնության ամբողջականության, կայունության և մարդկության գոյատևման համար: Մարդկային զարգացման ներկա փուլում չափազանց կարևոր է, որ հասարակության յուրաքանչյուր անդամ օժտված լինի բնապահպանական մտածելակերպով, բնապահպանական մշակույթով, ինչը կապահովի մարդկային հասարակության գոյատևումը, կայուն զարգացումը և նրա կողմից երկրագնդի բնական պայմանների և պաշարների խնայողաբար օգտագործումը, շրջակա միջավայրի պահպանումը: Համամարդկային արժեքներին ինտեգրվելու գործընթացում Երկիր մոլորակի պահպանումը պետք է դիտարկել որպես հիմնական և կարևոր արժեք: Այդ արժեքների գնահատման համար անհրաժեշտ է ունենալ բնապահպանական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Մեզանից յուրաքանչյուրը պարտավոր է իմանալ, որ պատասխանատու է շրջակա միջավայրի վիճակի համար և հենց այդ պատճառով էլ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել սովորողների բնապահպանական գիտելիքների հարստացման և նրանց բնության հետ հարաբերվելու բնապահպանական հարցերին:

Չետագոտության նպատակը: Եկոլոգիական դաստիարակության նպատակը վաղ տարիքից բնության հետ երեխայի միավորումն է, բնության հանդեպ պատասխանատու հոգատար վերաբերմունքի ձևավորումը: Ծրագրի Եկոլոգիական դաստիարակության բաժինը նպատակ ունի երեխայի մեջ ձևավորելու ճանաչողական, բնապահպանական գիտելիքներ, Եկոլոգիական գիտակցություն, հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ, բնության հետ հաղորդակցվելու ունակություն, Եկոլոգիական կուլտուրա:

Երեխաների Եկոլոգիական դաստիարակությունն ակնկալում է.

- իրեն զգալ բնության մի մասնիկը,
- հուզական, հոգատար վերաբերմունք դրսևորել բնության օբյեկտների նկատմամբ,
- ձևավորել և զարգացնել ճանաչողական և բնապահպանական կարողությունները:

Չետագոտության օբյեկտը և առարկան: Չետագոտության օբյեկտ են հանդիսացել բնապահպանական խնդիրները և դրանց վերաբերյալ տեղեկատվության փոխանցման մեթոդները, իսկ առարկան՝ բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնախնդրի ուսումնասիրությունն է, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում:

Չետագոտության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, բուն նյութից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Բնապահպանությունը որպես մարդկության գլխավոր հիմնահիմն, կրթությունը և դաստիարակությունը դպրոցում

Ներկա ժամանակներում, հատկապես դպրոցների կրթական ծրագրերում, առավել մեծ ճանաչում է ձեռք բերում կիրառական էկոլոգիայի ուսումնասիրումը: Ինչպես հայտնի է, կիրառական էկոլոգիան տնտեսական գործունեության այն մասն է, որը ծրագրավորում է էկոլոգիական համակարգի ձևավորումը՝ էկոլոգիայի և այլ գիտությունների շրջանում ձեռքբերումների օգտագործման կոմպլեքս հիմքի վրա:

Էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունն անձի ձևավորման կարևորագույն բաղադրամասերից են, որոնցով անձը դաստիարակվում է շրջակա միջավայրի նկատմամբ ունեցած համապատասխան վերաբերմունքի պահանջներով: Էկոլոգիական կրթության ռազմավարական նպատակն անձի էկոլոգիական աշխարհայացքի ձևավորումն է, որի հիմքում ընկած են գիտական գիտելիքը, էկոլոգիական մշակույթը և Էթիկան: Էկոլոգիական կրթությունն իրականացվում է կրթական հաստատություններում՝ համապատասխան պետական չափորոշիչներով: Այն միաժամանակ ենթադրում է ընդհանուր կրթական առարկաների էկոլոգացում և ներառում է հատուկ էկոլոգիական ուղղվածության դասընթացներ: Կրթության արդիականացման ներկա փուլում անհրաժեշտություն է առաջանում նորացնել նաև էկոլոգիական կրթության տեսական և գիտամեթոդական հիմքերը՝ այն հնարավորինս վերափոխելով կայուն զարգացման համար անհրաժեշտ կրթության: Ուսումնական առարկաների էկոլոգացումն իրականացվում է տվյալ առարկայի բովանդակության մեջ էկոլոգիական տարրերի, գաղափարների, սկզբունքների, հասկացությունների, մոտեցումների ներդրմամբ՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները, ինչպես նաև առարկայի բնույթը:

Կենսաբանության դասընթացում շատ քիչ ժամանակ է հատկացված էկոլոգիային, բնապահպանությանը: Սակայն շատ կարևոր է մատաղ սերնդին իրազեկել այսօրվա իրավիճակը (Երկիրը կանգնած է էկոլոգիական աղետի առաջ, հարկավոր է փրկել Երկիր մոլորակը, որովհետև այն մեր տունն է): Բնապահպանական գիտելիքների իմացությունը սովորողների մեջ կձևավորի էկոլոգիական մտածելակերպ, ինչ էլ բնության հետ ճիշտ հարաբերվելու, առողջ ապրելակերպի և բնապահպանական մշակույթի ձևավորման հիմք կդառնա:

Դրան հասնելու համար անհրաժեշտ է, որ կրթության բոլոր աստիճաններում սովորողները ստանան բնապահպանական գիտելիքներ, իրազեկ լինեն հանրապետությունում առկա բնապահպանական խնդիրներին, շրջակա միջավայրին սպառնացող վտանգներին, շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող իրավական փաստաթղթերին, ծրագրերին և ակտիվ մասնակցեն այն որոշումներին, որոնք նպատակաուղղված են շրջակա միջավայրի պահպանությանը և կայուն զարգացմանը:

Ինչի՞ մասին ես ուզում սովորել

Բնապահպանական կրթությունը շարունակական և զարգացող գործընթաց է և չպետք է ուսուցանվի սոսկ որպես առանձին առարկա: Էկոլոգիական ներկա իրավիճակն անհրաժեշտություն է առաջացնում աշակերտներին, հանրությանը հետևողականորեն և պարբերաբար բնապահպանական գիտելիքներ փոխանցել, իրազեկել և կրթել: Մարդկությունը մտահոգված է բնապահպանական խնդիրներով: Իսկ ինչ է այն: Ժամանակակից բնապահպանական կրթությունը լավագույնս բնութագրում են հետևյալ սահմանումները:

«Բնապահպանական կրթությունը արժեքների ճանաչման և ընկալումների պարզաբանման մի գործընթաց է: Այն կոչված է զարգացնելու մարդուն անհրաժեշտ այնպիսի հմտություններ և վերաբերմունք, որոնք պետք են նրան իր մշակույթի և կենսաֆիզիկական շրջապատի փոխհարաբերությունները հասկանալու և գնահատելու համար»: ԱՄՆ, Նևադա 1970 UCN/UNESCO–ի համաժողով, սա համարվում է բնապահպանական կրթության առաջին պաշտոնական սահմանումներից մեկը:

«Բնապահպանական կրթությունը կոչված է դաստիարակել, ձևավորել այնպիսի հասարակություն, որը ոչ միայն տեղյակ է բնապահպանական հիմնախնդիրներին ու հարակից հարցերին և մտահոգված է դրանցով, այլև ունի որոշակի գիտելիքներ, հմտություններ, շարժառիթներ ու նվիրում՝ թե՛ անհատապես, թե՛ միասնական ջանքերով ընթացիկ խնդիրները լուծելու և նորերը կանխելու համար»: Թբիլիսի 1977 UNESCO–ի 66 անդամ երկրների բնապահպանական կրթության միջկառավարական խորհրդաժողով:

Ինչպես տեսնում ենք, ժամանակակից բնապահպանական կրթությունը ենթադրում է ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձևավորում, այլ նաև պրակտիկ կարողությունների զարգացում: Այն երեխաներին հնարավորություն է ընձեռնում բնության պահպանության խնդրում ձեռք բերելու մասնակցային փորձառություն: Այս է պատճառը, որ երեխաները պետք է ուսումը ամենն ոչ միայն դաս սերտելով, այլ նաև հետազոտություններ և գործնական աշխատանքներ կատարելով: Այսօր մարդկանց քաղաքացիական ակտիվությունը կարելի է ապահովել միայն նրանց՝ խնդիրների լուծման գործընթացներին մասնակից դարձնելու միջոցով¹:

Յուրաքանչյուր ոք ծանոթ է հետևյալ ասացվածքին «Յմտությունները պրակտիկայի արդյունք է»: Մասնագիտական որակավորումը ձեռք է բերվում տվյալ առարկայի ինտերակտիվ պարապմունքների շնորհիվ, ուսման կամ գիտական պրակտիկայի ընթացքում: Սակայն ինչպես ենք մենք ձեռք բերում նյութի ընկալումը, դառնում տեղեկացված: Այո՛, սկզբունքորեն դա նույն բանն է, ինչ էլ որ դուք որոշեք, ինչոր բան պետք է նախապես յուրացվի, դա ձեր անձնական փորձի արդյունքն է: Սակայն, ինչպես յուրաքանչյուրը գիտի, փորձը չի կարող դասավանդվել:

Գալիլեյո Գալիլեյը մի անգամ ասել է. «Մենք մարդկանց ոչինչ չենք կարող սովորեցնել, մենք կարող ենք միայն օգնել նրանց բացահայտելու այն իրենց մեջ»: Այս արտահայտությունը արդիական է նաև այսօր, հատկապես, երբ խոսում ենք բնապահպանական գիտակցության և տեղեկացվածության զարգացման մասին: Բնության գեղեցկության ընկալման անձնական

¹ Ուելսի Կարլա, Միտք սերմանիր, ծառ տնկիր, Եր., «Նոյան Տապան», 2010, էջ 205:

փորձը, վայրի կենդանիների հանդեպ հիացմունքը, Էկոլոգիական փոխկապվածության բացահայտումը, բնական ռեսուրսներից անձնական շահ ստանալու հնարավորությունների բացահայտումը, բոլոր այս փորձերը հանգեցնում են բնապահպանական հիմնախնդիրների վերաբերյալ խոր և դրական վերաբերմունքի:

Բնապահպանական կրթությունը մեծապես աջակցում է աշակերտների մոտ նման գիտակցության ձևավորմանը: Փորձարարական կրթությունը Էական դեր է խաղում բնապահպանական կրթության մեջ: Փոփոխության գործընթացին զգալի աջակցություն է ցուցաբերվում ոչ միայն մտքի, այլև անձնական գործողությունների միջոցով: Այս պատճառով բնապահպանական և փորձարարական կրթության համադրությունը, հավանաբար, ամենաարդյունավետ ճանապարհն է դպրոցներում երկարատև բնապահպանական գիտակցության ձևավորման համար²:

Բնապահպանական կրթությունն ունի մի շարք առանձնահատկություններ ևս, այն չի սահմանափակվում մեկ առարկայի կամ մեկ գիտության շրջանակներում: Իրականում այն ամբողջական, ինտեգրալ կրթություն է, որը ներառում է գիտելիքներ ինչպես տարբեր առարկաների և գիտությունների, այնպես էլ կյանքի տարբեր բնագավառների՝ տնտեսության, առողջապահության, տեղեկատվական տեխնոլոգիաների, քաղաքականության վերաբերյալ: Բացի այդ՝ այն դուրս է երկրի, պետության, տարածաշրջանի սահմաններից և ընդգրկում է ողջ երկիր մոլորակն ու անգամ տիեզերքը: Բնապահպանական կրթությունը նաև տարբեր ժողովուրդների և մշակույթների ժառանգությանն անդրադառնալու լուրջ միտում ունի³:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը

Դպրոցներում իրականացվող բնապահպանական կրթությունը պետք է ներառի այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսին են՝ շրջակա միջավայրի պահպանությունը, թափոնների կառավարումը, անաղարտ բնության կարևորությունն ու արժեքը, ոչնչացման վտանգի առջև կանգնած տեսակների պահպանությունը և այլն, նաև հնարավորություններ ստեղծել պահպանելու մաքրամաքուր բնություն. շատ կարևոր է գիտակցել, որ բնապահպանական կրթությունը հիանալի կերպով կարելի է համադրել անմիջապես դպրոցի պատերից դուրս⁴ :

Բնապահպանական կրթությունը շարունակական գործընթաց է: Դպրոցական դասընթացում աշակերտների ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամփոփումը, իններորդ դասարանի կենսաբանության դասընթացում կարելի է ներկայացնել «Բնության պահպանություն» թեմայի ուսուցման ընթացքում: Պետական ծրագրով այդ թեմային հատկացված է չորս դասաժամ: Այն կարելի է անցկացնել նախագծային տեխնոլոգիայի մեթոդով: Այս մեթոդով աշխատանքը աշակերտներին հնարավորություն է տալիս ինքնուրույն

² Մարտին Գաբրիել, «Բնապահպանական կրթությունը մարգագետիններում և արոտավայրերում», Աշխատանքային փաստաթուղթ, Հայաստան-13/2012, էջ 66

³ Մարտին Գաբրիել, «Կենսաբազմազանությունը գյուղական և քաղաքային միջավայրերում», Աշխատանքային փաստաթուղթ, Հայաստան-20/2013, էջ 77

⁴ Ուելսի Կարլա, Միտք սերմանիր, ծառ տնկիր, Եր., «Նոյան Տապան», 2010, էջ 205:

հետազոտություններ կատարելու, վերլուծելու արդյունքները, տալու առաջարկներ և անմիջական մասնակցություն ցուցաբերելու բնապահպանական խնդիրները լուծելիս:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին

«Բնության պահպանություն» թեմայի ուսուցումը իններորդ դասարաններում հաջողությամբ իրականացնում եմ նախագծային տեխնոլոգիայի մեթոդով:

Նախագծի մեթոդը իր մեջ ներառում է հետևյալ քայլերը՝

- նախապատրաստական,
- պլանավորման,
- հետազոտական և
- արդյունքների ներկայացման փուլերը:

Երկու դասաժամ հատկացվում է նախապատրաստական, պլանավորման, հետազոտական փուլերին: Աշակերտները ուսուցչի հետ կատարում են համապատասխան աշխատանքներ:

Հաջորդ երկու դասաժամերին խմբերը ներկայացնում են իրենց հետազոտությունների արդյունքները:

Ստորև ներկայացնում եմ թեմայի ուսուցման ընթացքը:

Առաջին օր.

Դասի պլան 9–րդ դասարան

Դասի թեման՝ Բնության պահպանություն

Դասի նպատակը՝

Աշակերտները կիմանան՝

- բնապահպանական չորս հիմնախնդիրները,
- իրականացնել Էկոլոգիական տեղեկատվության հավաքագրում:

Կկարողանան՝

- բացատրել ԲՊ հիմնախնդիրների առաջացման պատճառները, հետևանքները
- տեսնել բնության փոփոխությունների և մարդու գործունեության միջև եղած

պատճառահետևանքային կապերը,

- դասակարգել տեղեկատվական նյութը,
- կանխագուշակել Էկոլոգիական իրավիճակները:

Կարժևորվեն՝

շրջակա միջավայրի պահպանությունը,

- իրենց դերը բնապահպանական խնդիրների լուծման գործում, բնության հետ ներդաշնակ

և առողջ ապրելու անհրաժեշտությունը⁵:

Դասի ընթացքը՝ Նախապատրաստման փուլում աշակերտներին հետաքրքրելու և առավել մասնակցային դարձնելու համար ուսումնական ֆիլմի միջոցով ներկայացնում եմ չորս հիմնախնդիրները:

⁵ Գասպարյան Ա. և մյուսներ, Կենսաբանություն, Եր., «ՎՄՎ–ՊՐԻՆՏ», 2014, էջ 170:

1. Մթնոլորտի պահպանություն
2. Ջրոլորտի էկոլոգիական հիմնախնդիրները
3. Հողերի աղտոտում: Անապատացում
4. Կենսաբազմազանության պահպանությունը

Տալիս եւք կարճ բացատրություն, որից հետո աշակերտների միջոցով լրացվում է «Ապագայի անիվը», որտեղ ներկայացվում են բնապահպանական խնդիրները և դրանց լուծման ուղիները:

Այնուհետև՝

1. Ծանոթացնում ենք սովորողներին նախագծային տեխնոլոգիայով աշխատանքային գործունեությանը, կանոններին և գնահատման չափանիշներին:

2. Ձևավորում ենք նախագծային խմբերը՝ հաշվի առնելով սովորողների հետաքրքրությունները, անհատական կարողությունները:

3. Հստակեցնում ենք ձևավորված (օդ, ջուր, հող, կենսաբազմազանություն) խմբերում կատարվելիք աշխատանքները:

4. Ընտրում ենք յուրաքանչյուր խմբի ղեկավար:

5. Որոշում ենք յուրաքանչյուր խմբի անելիքները՝ չափորոշչային պահանջներին համապատասխան:

Օրինակ՝ «Օդ» խմբին ներկայացվում է մթնոլորտի առկա հիմնախնդիրները՝ երեք ուղղություններով՝ օգոնային շերտի պահպանություն, ջերմոցային էֆեկտ, թթվային տեղումներ:

Պլանավորման փուլում ուսուցչի ուղղորդմամբ աշակերտները՝

1. Հիմնախնդրի լուծման համար առաջարկում են վարկածներ:

2. Զննարկում են հնարավոր արդյունքները:

3. Որոշում են աշխատանքների իրականացման ժամկետները՝ վերջնական և միջանկյալ (ժամանակացույց):

4. Ուսումնական խնդիրները բաշխում են մասնակիցների միջև:

5. Կազմում են աշխատանքային պլան:

6. Հանձնարարում է տեղեկատվության հավաքագրում՝ նախօրոք կազմած հարցաշարի և գրականության ցանկի համապատասխան:

Գրաֆիկը լրացնում են խմբերը և ներկայացնում հաջորդ դասին:

Երկրորդ օր.

Դասի նպատակը՝

• Դասակարգել հավաքագրված տեղեկատվական նյութը:

• Ձևակերպել հետազոտության արդյունքները:

• Ներկայացնել կատարված աշխատանքները հաշվետվության կամ զեկույցի տեսքով:

Դասի ընթացքը՝

Աշակերտները ներկայացնում են աշխատանքային գրաֆիկը և իրենց կատարած հետազոտական աշխատանքները:

Ուսուցչի ուղղորդմամբ կատարվում է հավաքագրված տեղեկատվության դասակարգում, խմբավորում:

Յուրաքանչյուր խումբ ձևակերպում է հետազոտության արդյունքները, տալիս են հիմնախնդիրների լուծման ուղիները:

Ներկայացնում են կատարված աշխատանքները հաշվետվության կամ զեկույցի տեսքով: Խմբերի զեկույցները ստուգվում են ուսուցչի կողմից: Անհրաժեշտ ուղղումներ է կատարում ուսուցիչը: Խմբերը նախապատրաստվում են հաջորդ դասերին աշխատանքների ներկայացմանը:

Երրորդ օր. Արդյունքների ներկայացման փուլում՝ նախագծային խմբերը ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները:

Առաջին խումբը ներկայացնում է «Մթնոլորտի պահպանությունը» թեմայով կազմված զեկույցը, որը ուղեկցվում է սխեմաների, գծագրերի, նկարների ցուցադրությամբ: Իրականացվում է նախագծման ընթացքում կատարված աշխատանքների քննարկում, որի ընթացքում աշակերտները արտահայտում են իրենց կարծիքները:

Երկրորդ խումբը ներկայացնում է «Զրոլորտի էկոլոգիական հիմնախնդիրները» թեմայով կազմված սալիկահանդեսը: Խմբերի աշխատանքների գնահատումը կատարվում է ըստ գնահատման սանդղակի (յուրաքանչյուր աշակերտի բաժանվում է «Գնահատումը ըստ իրատեսության» աղյուսակը): Աշակերտները լրացնում են աղյուսակները՝ տալով միավորներ: Ներկայացվում են արդյունքները: Առավել շատ միավոր հավաքած խումբը խրախուսվում է: Բոլոր աշակերտները գնահատվում են:

Չորրորդ օր. Երրորդ խումբը ներկայացնում է «Հողերի աղտոտում: Անապատացում» թեմայով պատրաստած զեկուցումը, որը ուղեկցվում է իրենց նկարած ֆոտո շարքով:

Չորրորդ խումբը ներկայացնում է «Կենսաբազմազանության պահպանություն» թեմայով սալիկահանդեսը: Աշխատանքները քննարկվում են: Ամփոփվում են կատարված աշխատանքները և գնահատում ինչպես խմբերին, այնպես էլ յուրաքանչյուր աշակերտի: Խմբերի կատարած աշխատանքների հիման վրա իմ օգնությամբ բացվում է ցուցահանդես:

Ցածր դասարանների աշակերտների համար կազմակերպում են ցուցադրություն, որտեղ որպես ուղեկցորդներ հանդես են գալիս իններորդիները: Այս ցուցադրությունը ապահովում է բնապահպանական կրթության շարունակականությունը, դաստիարակում է իրազեկ, սրտացավ և գործունյա վաղվա քաղաքացուն:

Նախագծային մեթոդով իրականացվող ուսուցման ընթացքում աշակերտները խոր և բազմակողմանի գիտելիքներ են ձեռք բերում: Կարևոր է, որ ստացած գիտելիքները անձնական փորձառության արդյունք են: Սովորողները ձեռք են բերում հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ: Ձևավորվում է շրջակա միջավայրի հետ հարաբերվելու մշակույթ, անձնական գործողությունների միջոցով հիմնախնդիրների լուծման գործընթացին մասնակից դառնալու վստահություն:

Դպրոցում մարդ-բնություն փոխհարաբերության խնդիրների նկատմամբ հետաքրքրությունը հնարավոր է բավարարել երեխաների և երիտասարդների կրթության և

դաստիարակության տարբեր մակարդակներում: Առաջին հերթին, հիմնվելով ավանդական և նորարարական մեթոդների, ձևերի և տեխնոլոգիաների վրա, յուրաքանչյուր անհատ պետք է գիտակցի իր պատասխանատվությունը և ունեցած ազդեցությունը բնության վրա: Դրա համար անհրաժեշտ է իմանալ դրանց լուծման հիմնական խնդիրներն ու միջոցները: Այդ խնդիրները նպատակաուղղված և արդյունավետ լուծվում են սոցիալական Էկոլոգիայի միջոցով, որը համարվում է գիտությունների ինտեգրացման առարկան:

Որպես կանոն՝ կիրառական Էկոլոգիան Էկոլոգիական գործունեության պրակտիկ գիտական մասն է, որի արդյունքը համարվում է Էկոլոգիական ծրագիրը: Այն օգտակար է գործնականորեն կյանքի կոչելու համար, և այս ծրագրի իրագործումը տալիս է անսահմանափակ հնարավորություններ կրթական հաստատություններում տվյալ ոլորտի դասավանդման համար: Կիրառական Էկոլոգիայի բաղկացուցիչ մասը կազմում են 3 խոշորագույն հատվածներ՝ գիտական, պրակտիկ և կողմնորոշող գործունեության.⁶

ա) Էկոլոգիական հետազոտությունների ներդրում և վերլուծում (գիտատեխնիկական, սոցիալական, իրավական և այլ ուղղվածությամբ), որոնք թույլ են տալիս լուծել տեսական Էկոլոգիայի և գիտական այլ ուղղությունների համապատասխան հարցերի կիրառումը, ինչպես նաև լուծել հարցեր, որոնք վերահսկում են համապատասխան ծրագրի ստեղծումը, այդ թվում և համանման չափանիշների դասավանդումը:

բ) Էկոլոգիական նախագծում, որը թույլ է տալիս ստեղծել տեխնոլոգիական նախագծեր Էկոլոգիապես մաքուր արտադրանք ապահովելու համար, ինչպես նա Էկոլոգիական կրթության լուսաբանման, տեղեկացվածության, դաստիարակության, օդի և ջրի մաքրման սարքերի մեխանիզմներ, սոցիալ-Էկոլոգիական գործունեության և՛ նորմատիվային, և՛ իրավական նախագծեր, որոնք կվերահսկեն շրջակա միջավայրի աղտոտումը: Այս նախագծերը կարող են լինել ինքնուրույն, ինչպես նաև ապրանքների և ծառայությունների, արտադրության այլ նախագծերի բաղկացուցիչ մասը:

գ) Էկոլոգիական մոդելավորման համակարգի նախագծում, ծրագրի իրականացման նախագծում և ղեկավարում, ներառյալ ուսումնասիրման, փորձարկման, լիցենզավորման, աուդիտի, վերահսկման հարցերը՝ ստեղծելով Էկոլոգիական ուղղվածության մոդել:

Սովորողները կրթական, պրակտիկ, նախագծային, դերային և գործնական խաղերի օգնությամբ կգան այն համոզման, որ Էկոլոգիական գործունեությունը կարող է իրականացվել մարդու տարբեր տեսակի արդյունաբերական և բնապահպանական գործունեության շնորհիվ:

Կիրառական Էկոլոգիայի ուսումնասիրման պրոցեսում, բացի ավանդական բաժիններից, որոնք կապված են բնական Էկոհամակարգերի հետ, կարող են ներառվել այնպիսի բաժիններ, ինչպիսիք գոյություն ունեն գիտական ոլորտում տարբեր տեսակի ենթահամակարգերի ուսումնասիրման համար (մարդու Էկոլոգիա, առողջապահական Էկոլոգիա, գյուղատնտեսական արտադրության Էկոլոգիա, արդյունաբերական Էկոլոգիա, կրթական Էկոլոգիա և այլն):

⁶ Реймерс Н.Ф., Экологизация. Введение в экологическую проблематику. М.: Издво РОУ, 1994.

Պրակտիկայում այս չափորոշիչների դասավանդման ժամանակ մենք օգտագործում ենք տարբեր տեսակի նորարարական տեխնոլոգիաներ: Առավել մեծ ճանաչում ունեն խաղային, նախագծային, մոդելավորող, բանավիճային տեխնոլոգիաները: ⁷

Ճանաչողական գործունեության արդյունքում սովորողները մանկավարժների հետ միասին մշակում են տեսասահիկային ներկայացումներ, զեկույցներ, հաղորդագրություններ, նախագծեր, օրինակ՝ այնպիսի թեմաներով, ինչպիսիք են՝ «Սոցիալական Էկոլոգիայի կառուցվածքը», «Ռ. Պարկի սոցիալական Էկոլոգիայի մոդելը», «Հասարակության և բնության փոխհարաբերության պատմական փուլերը. ինդուստրացիոն ժամանակաշրջան», «Վ. Ի Վերնադսկու և Ն. Ն. Մոյխեսևի նոոսֆերայի մասին ուսմունքը», «Բնօգտագործման Էկոլոգիա. հռոմեական ակումբ», «Էկոլոգիան և մարդու առողջությունը» և այլն: Հատուկ տեղ են զբաղեցնում առողջապահական խնդիրները և մարդու կյանքի համար բարենպաստ Էկոլոգիական միջավայրի ստեղծումը: ⁸

⁷ Малофеев В. И., Социальная экология: Уч. пособ. М., “Мониторинг”, 2002. –260 с

⁸ Ս. Սողոյան, Գ. Մինասյան, Դպրոցներում սոցիալական Էկոլոգիայի հիմունքների դասավանդման գործընթացում նորարարական տեխնոլոգիաների կիրառումը, «Մխիթար Գոշ» ամսագիր, 2019թ., էջ 15

Եզրակացություն

Այսպիսով՝ բնապահպանությունը հիմնվում է արդի գիտության բաժանման վրա, որն ուսումնասիրում է մարդկային հասարակության և բնության փոխհարաբերությունները: Սովորողների կողմից այս չափանիշների ուսումնասիրման պրոցեսում հետազոտվում են նրա առարկան և օբյեկտը: Այս ուղղությամբ մեր աշխատանքների փորձը թույլ է տալիս մեզ մշակել այնպիսի ծրագիր, որը մեծ դեր կարող է ունենալ բնակչության տարբեր խմբերի գործառույթների ծանոթացման գործում, ինչպես նաև թույլ կտա իրականացնել նրանց գործունեության լիարժեք կազմակերպումը, որն անմիջապես ազդում է բնության, սպառվող բնական ռեսուրսների վիճակի վրա:

Բացի այդ, տարբեր նորարարական մեթոդների, ձևերի և տեխնոլոգիաների օգնությամբ տեղի է ունենում իրավիճակների նախագծում և մոդելավորում՝ առավել մեծ տեղ հատկացնելով բնապահպանական մեթոդներին, որոնք կիրառում են բնակչության տարբեր շերտերը:

Յուրաքանչյուր անհատ փոքր հասակից պետք է գիտակցի իր խոր կապը բնության հետ, հասկանա իր դերը նրա պահպանման գործում: Այդ իսկ պատճառով սոցիալական Էկոլոգիայի հիմնատարրերի ուսուցման արդիականությունը որպես դպրոցական ծրագիր ոչ մեկի մոտ կասկած չի առաջացնում և ձեռք է բերում մեծ ճանաչում: Այս գիտական ոլորտի զարգացման և կայացման վրա մեծ ազդեցություն ունի մարդու Էկոլոգիան, քանի որ այն ուսումնասիրում է մարդկանց և շրջակա միջավայրի անմիջական կապը:

Այսպիսով՝ սոցիալական Էկոլոգիան զարգանում և դառնում է գիտելիքների ստացման կարևորագույն ոլորտ, օգնում է հասկանալու ոչ միայն բնությունը, այլ նաև մարդուն ամբողջությամբ: Սոցիալական Էկոլոգիան թույլ է տալիս մարդկանց հասկանալ, թե ի՞նչ տեղ են նրանք զբաղեցնում Երկրի վրա, ի՞նչ վնաս են հասցնում բնությանը, և ի՞նչ պետք է անել այն պահպանելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գասպարյան Ա. և մյուսներ, Կենսաբանություն, Եր., «ՎՄՎ–ՊՐԻՆՏ», 2014, էջ 170:
2. Մարտին Գաբրիել, «Բնապահպանական կրթությունը մարգագետիններում և արոտավայրերում», Աշխատանքային փաստաթուղթ, Հայաստան–13/2012, էջ 66
3. Ուելսի Կարլա, Միտք սերմանիր, ծառ տնկիր, Եր., «Նոյան Տապան», 2010, էջ 205:
4. Ս. Սողոյան, Գ. Մինասյան, Դպրոցներում սոցիալական էկոլոգիայի հիմունքների դասավանդման գործընթացում նորարարական տեխնոլոգիաների կիրառումը, «Մխիթար Գոշ» ամսագիր, 2019թ., էջ 15
5. Малофеев В. И., Социальная экология: Уч. пособ. М., “Мониторинг”, 2002. –260 с
6. Реймерс Н.Ф., Экологизация. Введение в экологическую проблематику. М.: Издво РОУ, 1994.